



# Հակոբ Պարոնյան

## Խիկար

Քանի մը տրամ ալ բանաստեղծութիւն

### ՔԱՆԻ ՄԸ ՏՐԱՄ ԱԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Հարաւային հողմերը մարդու քթին ձեւը կը փոխե՞ն, պարզ քթի մը արծուի քթի ձեւ կու տա՞ն, մէկ խօսքով, հարաւային կողմերը բանաստեղծ կ'ընե՞ն մարդս:

Աւաղիկ հարցում մորում, գիտենք, ժխտական պատասխան պիտի տան բանաստեղծք. ճշմարտութիւնն այս է սակայն, թէ բանաստեղծութեան պէս բան մը կը նշմարեմ ին վրայ վերջին երկու ամիսներու մէջ, ուր հարաւային հողմ կը փչէ շարունակ, ո՛ր կողմ ալ դառնաս... կարծես հիւսիսն ալ հարաւէն կը փչէ:

Արդեօք բանաստեղծութեան հուրն սրտիս մէջ մոխիրի տակ ծածկուած էր ու Նոտոս ուժգին փչելով արծարծե՞ց գայն:

Տեսարաններ, որք բնաւ հրապոյր չունէին երբեմն ինձի համար՝ կը հրապուրեն գիս այսօր, կը գրաւեն միտքս եւ կը յափշտակեն, եթէ չեմ սխալիր, հոգիս: Ի՞նչ փոփոխութիւն է այս: Քառասուն եւ չորս շնիկ աստղ տեսած կարասը դէպի Պառնա՛ս գլտորի:

Ար սիրէի ծովն, բայց երբեք անոր եզերաց վրայ ժամերով կայնած չէի, որպէս ամսոյս 12-ին:

Արձանացեալ ծովը կը դիտէի եւ կը բանաստեղծէի:

Կորուսած էր իւր գեղն, փայլն ու ժպիտն: (Այսինքն ոչ լուսին կար, ոչ աստղ): Կը տապալտկէր անկողնոյն մէջ, որուն վերելը սեւ քօղ մը ձգուած էր: (Սեպէ թէ ծովը քարեօլայի վրայ պառկեցուցած էմ եւ քարեօլայի վրան ալ սեւ խումաշ մը ձգած էմ հասկցնելու համար, թէ գիշեր էր. տապալտկիլն ալ ալեկոծութեան տեղ դրած էմ): Իւր կուրծքը կ'ելնէր, կ'իջնէր նման հիւծեալ հիւանդի մ'որուն շունչն մօտ է սպառելու: ( Ելանեն լեռնանան եւ իջանեն դաշտանանի մէկ տեսակն է): Խորին հառաչանքներ, ողբոց աղաղակներ կ'արձակէր իւր սրտէն եւ մահիճէն դուրս նետուելու կ'աշխատէր ասդին անդին գարնուելով. (Որպէս թէ հիւանդի մը պէս կ'ողբար յուսահատ եւ կ'ուզէր քարեօլայէն վար իջնալ): Դառն արտօսը կը հեղուր եւ այդ արտասուքն իսկ էր, որ տող-տող շարուած կու գար անկողնոյն եզերքն ողողելու: (Ալիքն արցունքի եւ անոր շարքը տողի նմանցուցած էմ):

Կը համրէի այդ տողերն եւ կը հարցնէի ես ինձի. ո՞չ ապաքէն թշուառաց եւ ողբոց արտասուաց հեղեղները ծով կը թափին: (Երբ տեսայ, որ արցունքը շատկեկ եկաւ եւ անբնական եղաւ, որբերն եւ թշուառները մէջ խառնեցի): Այդ արտասուքէն չորս հարիւր տող համրեցի, կարդացի, տխրեցայ ու մեկնեցայ: (Ըսել ուզած էմ թէ ժամերով սպասեցի հոն, թէ ծովը բանաստեղծն էր եւ թէ անոր տխուր տողերը կարդացած էի):

Բարեբախտաբար ռեւէ տպատրութիւն շատ չապրիւր իմ վրայ, շուտ մը կը մեռնի: Հազիւ հեռացայ ծովէն, ա՛խ, ըրի, եթէ քիչ մը կարմիր ներկ գտնուէր քովս՝ անմիջապէս կարմիր կը ներկէի ծովն եւ երկուքի բաժնելով զայն Քուզկունճուր կ'անցնէի եւ հոն կանգնելով կը պոռայի. Anch io son... Mose, բայց ո՞ւր գտնել այդ «երանգն առաքինութեան»:

Ինչի՞ վերընծայել եթէ ոչ հարաւային հողմերուն ծովէն ընդունած տխուր տպատրութիւնս: Ուրիշ անգամներ ալ կը տեսնէի ծովն յուզեալ եւ կը հարցնէի անոր.

Ինչո՞ւ կը կոծիս, ո՛ր ծով, բժիշկները սխալ դե՞ղ մը տուին, կամ փոխանակագիրներ՞ոդ չընդունուեցան, կամ գաւառներէն ազգային տուրք չե՞ս կրնար հաւաքել, կամ պարահանդէսի համար տասը տոմսա՞կ տուին քեզի, կամ տղադ դրա՞մ չունի եւ կարգուի՞լ կ'ուզէ, կամ տան ծախուցդ չե՞ս կրնար յաղթել, կամ աժան լասթիք մ'առիր եւ երկու օրուան մէջ պատռեցա՞ւ, կամ արուած

մեճիտիէ՞ մը քշեցին քեզի, ի՞նչ ունիս:

Բայց այս անգամ, որպէս տեսաք, այսպէս չեղաւ: Ըսի թէ ծովը կու լար, կ'ողբար: Ծովը կու լա՞յ, կ'ողբա՞յ... խենթութիւն չէ՞ սա: Կատարեալ խենթութիւն է եւ ճիշտ անոր համար է, որ բանաստեղծութիւն է, միայն թէ յանգաւոր խենթութիւն չէ: Հարաւի բանաստեղծէ մ'ալ յանգ ուզելն ինձ խստապահանջութիւն կը թուի քիչ մը: Յանգերու համար դիմեցէք երիտասարդ բանաստեղծ Փանոսեանին, որ այդ մասին ամէնէն հարուստն է եւ որ ամենայն իրաւամբ կրնանք ըսել, թէ յանգի հանք կը բանեցնէ այնքան յաջողակութեամբ, մանաւանդ իւր ֆրանսերէն քերթուածներու մէջ: Առաջին կարգի հանք հանքածուխի մ'որ կաթիլ մը կայծով կ'արծարծի եւ կրակ կը կտրի:

Կաթիլ մը կա՛յծ: Այո՛, կաթիլ մը կայծ: Եթէ պնդես կայծ մը կաթիլ ալ կրնամ ըսել: Եթէ քիչ մ'ալ պնդես՝ կաթիլ մը կրակ ալ ըսելու չեմ վախնար.

բանաստեղծներն մենաշնորհումներ ունին, որոց շնորհիւ ազատ են կարծր մարմինները հեղուկի վերածել եւ հեղուկ մարմինները կարծրացնել:

Չկարդացի՞ր Արեւելքի մէջ Ուխտաւորի նամակն, որ կ'ըսէր թէ «Կաթիլ մը խղճմտանք եթէ ունենանք՝ կարող ենք Էջմիածնայ խարխուլ շէնքն ի հիմանց նորոգել»: Բանաստեղծ մ'ազատ է, երբ ներդաշնակութեան վրայ է խնդիրը մանաւանդ, խղճմտանքը սրուակի մէջ լեցնել եւ տրամաբանութիւնը գաւաթով խմել: Նոյնպէս խղճահար մարդու մը համար կրնայ ըսել. «Ահա մարդ մ'որ սափոր մը լեցուն խղճմտանք ունի». ինչպէս նաեւ անխիղճ մարդու մը համար. «Ասոր խղճմտանքին մէջ ջուր խառնուած է»: Ներդաշնակութիւն կ'ուզէ նաեւ Սանդուխտի հեղինակն, որ յանձնարարելով մեզ Լոյս եւ ստուերքի ընթերցումն՝ դժգոհութիւն կը յայտնէ միանգամայն այն քերթուածքներէն, որ արուեստակեալ են եւ այն քերթողներէն, որ օտարի փետուրներով կը զարդարուին: Շատ իրաւունք ունի Աճեմեանի դասընկերն եւ կը սպասենք, որ ուրիշ յօդուածով մը մատնանիշ ընէ օտարի փետուրներով զարդարուող պուլետներն. ձաղկէ եւ հալածական վանէ հրապարակէն այդ պատնասեան աւագակները: Ոչ որ վիրաւորելու քաղաքավարութեամբ գողերը յակննէ յանուանէ չնշանակելը մայրաքաղաքիս բոլոր ազգային բանաստեղծներն արատաւորել է:

Բարեբախտաբար բնաւ ունեցած չեմ այս քաղաքավարութիւնը: «Բայց, կ'ըսեն մեզ, Ալիշանի աշակերտն չէ կարող մատնանիշ ընել այն գողերը, վասնզի

Ժամանակաւ ինքն ալ բաւական սիրամարգներ փետտած է. իր ձեռագիր ողբերգութեանց մէջ փոխառութիւնները թէւ նոտր տառերով գրուած են, բայց որովհետեւ նոտր արտասանութիւն չկայ՝ հանդիսականք բնականաբար հեղինակին կ'ընծայեն ինչ որ կ'ելնէ դերասանին շրթունքէն: Նոյնպէս շատ հատուածներ չակերտի մէջ պահուած են եւ դժբախտաբար շատ դժուար է չակերտ տեսնել դերասանի բերնին մէջ»: Անտեղի առարկութիւն. ի՞նչ կ'ուզէիք որ ընէր, երբ խեղճին վրայ յարձակած էին եւ ողբերգութիւն կ'ուզէին: Թող փախչէր. Կ'ուզէի՞ք որ ստիպէր դերասանն, որ ամէն անգամ խօսելու սկսած ժամանակն կրկնէր սա խօսքերը. որպէս կ'ըսէ Գոռնեյլ, որպէս կ'ըսէ Շեքսպիր, ինչպէս ըսած է Ալֆիերի, ինչպէս կը գրէ Ռասին. Սանդուխտ ի Գոռնեյլ է ըսեր. Այդ անհրատութիւն է. Գէթ իր դասընկերին ըսել տուածն ինքն ալ ըսէր. Mon verre n'est pas grand, mais je bois dans mon verre : Ո՛չ, այդ պահանջումը նախանձու արդիւնք կը թուի ինձ, որովհետեւ Թերզեան Էֆենտի մտային բաւական գանձ ունի համարձակութեամբ ըսելու համար je prends mon bien où je le trouve : Ինչ որ ըլլայ՝ Թերզեան Էֆենտին՝ որու տաղերն իրաւամբ հոշակ հանած են իրենց յստակութեամբ, ներդաշնակութեամբ, փափկութեամբ եւ շնորհքով, յարմարագոյն անձն է մեր մէջ, որ կարող է Արեւելքի մէջ քննադատական մը ստեղծել եւ անաշատութեամբ քննադատել այն քերթուածներն, որ վերջերս հրապարակը կ'ողողեն, եւ ցոյց տալ ազգին ազգայինն, օտարն, հարազատն եւ խորթն: Այո՛, Թերզեան Էֆենտին կարող է այս պաշտօնն կատարել, որովհետեւ որքան տաղանդ, այնքան պարկեշտութիւն ունի, եւ վստահութեամբ կրնանք ըսել՝ թէ իր ողբերգութեանց համար իրեն տրուած ջերմ ծափահարութիւնները խոնարհութեամբ ընդունած է ի դիմաց Գոռնեյլի, Շեքսպիրի եւ այլն, որոց տունը կը ներկայացնէր մայրաքաղաքիս մէջ:

Միայն թէ ուղղադատութիւնն աւելի քանակութեամբ գործածելու է, քան գործածած է՝ Լոյս եւ ստուերքի առթիւ ընդհանուր դժգոհութիւն յայտնելով վոսփորական արտադրութիւններէն, որք, խոստովանինք արդար ըլլալու համար, ոչ թէ միայն յիշեալ ադրիական տողերուն կը հաւասարին, այլ շատ անգամ կը գերազանցեն իսկ գանոնք: Ընդունինք, թէ Լոյս եւ ստուերքի հեղինակն հարաւի բանաստեղծ չէ, բայց միաբանինք նաեւ խոստովանելու, թէ հիւսիսի ալ չէ: Իւր գործը, կարելի չէ ուրանալ, ունի կոկիկ եւ սիրուն էջեր, այսուամենայնիւ մեծ տպաւորութիւն չընէր, մանաւանդ անոնց վրայ, որ բանաստեղծէն նոր

ստեղծագործութիւն կը սպասեն եւ ոչ թէ հատուածներ, գորս կարծես երբեմն կարդացած ես առանց սակայն կարդացած ըլլալու: Կ'երեւի թէ սկանչները շատ վարժուեցան կարգ մը տողերու, որք բանաստեղծութեան ֆորմիլ դարձած են եւ գորս հարիւր յիսուն անգամէն աւելի լսած ու կարդացած ենք: Հոգոյ միշտ միեւնոյն յուզումներ, որ կ'արտայայտուին տարբեր յանգերով, լճակի մ'ալեակներ, գորս միջակ հողմը կը ստեղծէ յաճախ եւ որք կը շարժին այն ուղղութեամբ, գոր հողմը կու տայ իրենց: Աճեմեան հագի ուրեք բարձրանալ կը փորձէ անդ՝ ուր յաճախ կը սլանայ Մէթեան, երբ աննշմարելի ըլլալու փափաքէն առաջնորդուած չէ, անդ, ուր թեւատարած կը թռի Փանոսեան, երբ յանգապաշտ չէ, անդ, ուր կը ճախրէ Տեմիրճիպաշեան, երբ սիրտն հետն առնէ եւ յանգն ու վանկ մէկդի թողու: Լոյս եւ ստուերքի հեղինակն ունի նաեւ Էջեր, գորս կրնար չգրել, եթէ ուզէր, կամ արձակ գրել, եթէ կամենար, եւ կամ աւելի աղէկ գրել, եթէ որոշած էր անպատճառ ոտանաւոր գրել: Ըստ իս հարկ չկայ գրելու անանկ ոտանաւորներ, որոց միայն արժանիքն է իրենց ոտանաւոր ըլլալը: Առնենք, օրինակի համար, իւր Դրամ քերթուածը, դրամ, որ չերթար հետ յիսուն ձմռան.

Աւասիկ.

ԴՐԱՄ

Հարկ չէ միշտ լինել խոհուն գիտնական,  
Յ աճախ նա որ է տգէտ աննշան՝  
Ա կաղենիայի ընտրովի անդամ  
Ե թէ ունի դրամ:

Չարմանալի են օրէնք աշխարհի.  
Կ արծես թէ ճարտար խօսի եւ խորհի  
Ն ա՝ որ իրօք է ապուշ եւ անհամ  
Ե թէ ունի դրամ:

Ընկերութեանց մէջ բազմի վերին բարձ:  
Ե րկնից մէջ նաեւ յուսայ առնուլ վարձ՝  
Ե րբեմն նա իսկ, որ է անզգամ  
Ե թէ ունի դրամ:

Ինչ փոյթ եթէ կաղ ըլլայ կամ քոստո.  
Թ է համբոյրք նորա բուրեն գազիր հոտ,  
Տ օն ե ն գնա միշտ հէք կանանց երամ  
Ե թէ ունի դրամ:

Նա որ ոտնակոխ առնէ զիր պատիւ  
Ե ի ծաղրէ ամէն զգացմունք ազնիւ.  
Ն ա ես ստանայ փառք ու բարեկամ  
Ե թէ ունի դրամ:

Իրաւունք գիտնոց միշտ լեցուն գրպան,  
Ե ի առանց խղճի կու տայ տէր պապան,  
Չ որս կին մէկ մարդուն, ես կը հաւատամ  
Թ է սա ունի դրամ:

Ես չեմ ընդունիր այս Դրամն իբրեւ բանաստեղծութիւն, ոչ ալ իւր նմանները,  
բայց հեղինակը շնորհաւորելով կ'ընդունին Ուր երթան, Հոգիքը, Հալքի եւ  
Բրինկիքոն, Տագնապը, Մահը, շնջելով այս վերջինէն հետեւեալ տողերը:

Երբ գրեց հնչեն ծեր, մանուկ եւ կին  
Ս ոսկալով ծածկեն ձեռք գերեսնին:

Կինը բնաւ գործ չունի տողին վերջը, եւ անոր յանգ մը գտնելու համար երեսը  
միանգամայն թէ գրաբար եւ թէ ռամկաբար հոլովելու առանձնաշնորհութիւնը  
գեղծում կը թուի ճաշակիս:

Եթէ հեղինակը ներէ կը վերցնեն նաեւ Մահին հետեւեալ տողերուն վերջինը.

Ե՛կ այգուն կանուխ երբ հալիկ գարթնու  
Ե ի գերդ օրհասին եղերգէ աղու.  
Ե՛կ այգուն-այգուն, ե՛կ գգոյշ-գգոյշ,  
Մ ի՛ վրդովիր կինս, որ ննջէ անուշ:

Այս վերջին տողը՝ մանաւանդ քերթուածին վերջերը՝ մահը կը մահացնէ:

Գալով Կին ին եւ Մի՛ մոռնար զիս ին կը խոստովանինք, թէ գեղեցիկ են, միայն թէ, ինչպէս ըսինք, մարդս հազար մի մոռնար զիս կարդալէն ետքը եւ հազար անգամ լսելէն վերջը, թէ կինն հանելուկ մ'է, թէ կնոջ սիրտն խորան մ'է, թէ կնոջ սիրտն անթափանցելի է, թէ կինն երկնային պարգեւ մ'է, կարծես ոչինչ կը զգայ եւ երբ հազար ու մէկերորդ անգամ կարդայ կամ լսէ զանոնք թէ եւ քիչ մը տարբեր եղանակաւ: Այսու ըսել չենք ուզեր, թէ քերթող մ'երգելու չէ ինչ որ երգուած է արդէն ուրիշներէ, այլ ըսել կ'ուզենք, թէ քերթող մը կամ այն, ո՛վ եւ ի՛նչ որ ըլլայ, որ ստեղծելու ասպարէզին մէջ կը գտնուի, նորութեանց մէջ միայն կրնայ միտքեր եւ հոգիներ հրապուրել եւ գրաւել:

Ահա, ընթերցող, քեզի քանի մը տրամ ալ բանաստեղծական...

Կնքենք ուրեմն մեր յօդուածն, որ, արդիւնք հարաւային հողմերու, երկար եղաւ անոնց պէս: Անկեղծաբար յայտնեցինք հարաւէն եւ հարաւի առթիւ Լոյս եւ ստուերքէն մեր ընդունած տպատրութիւնը: Եթէ սխալ է այն, գնացէք բողոք բանալու հարաւային հողմերու դէմ, եթէ ուղիղ է՝ գնացէք գոհանալու գՆոտոսէ: Եթէ այդ հողմերը չփշէին՝ ո՛վ կը նայէր ծովուն երեսը, ո՛վ պիտի փնտռէր Լոյսն եւ ստուերը, որո՞ւն հոգն էր բանաստեղծ ըլլալ... դեկտեմբերի մէջ:

## ԿԱՐԾԻՔ ՅԱՅՏՆԵԼՈՒ ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԵՂԱՆԱԿ ՁՕՆ ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՍ

Ձեզ կը նուիրեն սոյն յօդուածս, ու ազգային երեսփոխանք, եւ յուսով են, թէ սիրով պիտի բարեհաճիք ընդունիլ զայն, որովհետեւ տպագրութեան ծախքն եւ պիտի հոգամ:

Կը խնդրեն միայն, որ ուշադրութեամբ ընթեռնուք զայն եւ աշխատիք օգուտ քաղել յօգուտ այն խնդրոց, որ ձեզ կը ներկայանան լուծուելու համար կամ չլուծուելու համար:

Մտիկ ըրէք ուրեմն.

Ազգային ժողովոյ մէջ յաճախ տեղի ունեցած անհաճոյ ակնարկութիւններն եւ դժուարամարս ճատերն, զորս տեսարք երեսփոխանք կը փոխանակեն իրարու

հետ՝ մասնաւոր խորհրդածութեանս առարկայ ընելով, սա եզրակացութեան հասայ, թէ երեսփոխան մը իր կարծիքն յայտնելու համար նախ նկատողութեան կ'առնէ դրամական վիճակն այն երեսփոխանին, որուն պիտի պատասխանէ եւ յետոյ անոր դրամական վիճակին յարմար եղանակ մը կը գտնէ իր կարծիքն յայտնելու:

Օրինակ մը տամ եթէ չէք ձանձրանար:

Անձանօթ երեսփոխանն ես եմ:

Ենթադրենք՝ թէ տէր երեսփոխան մ'որ հարիւր հազար ոսկի ունի յատենի ընդհանուր ժողովոյ կը պնդէ օր մը, թէ շաքարը սեւ է:

Այո՛, կը պատասխանեն, մանաւանդ թէ շատ սեւ է, մինչդեռ տղէտներն այն հաւատքն ունին, թէ ճերմակ է:

Երեսփոխան մ'որ իննսուն հազար ոսկի ունի, շաքարին սեւութիւնը կը փաստաբանէ նոյնպէս:

Կը պատասխանեն.

Իրաւունք ունիք, ինչ որ կ'ըսէք՝ յայտնի է արեւու պէս:

Ութսուն հազար ոսկի ունեցող երեսփոխան մ'ալ օր մը կը փափաքի, որ շաքարը սեւ ըլլայ:

Կը պատասխանեն.

Համակարծիք եմ ձեզի, քուէի դրէք խնդիրը:

Եօթանասուն հազար ոսկւոյ տէր երեսփոխան մ'ալ կ'որոշէ ինքնիրեն, թէ սեւ է շաքարը:

Կը պատասխանեն.

Կ'երեւի թէ բաւական իմաստասիրած էք շաքարը:



Վաթսուն հազար ոսկի պարունակող դրամարկղի տէր երեսփոխան մ'ալ կը  
հաւատայ, թէ սեւ է շաքարը:

Կը պատասխանեն.

Հաւատք քո կեցուցին գքեզ:

Յիսուն հազար ունեցողն ինչո՞ւ իւր քուէն չտայ ի նպաստ սեւութեան շաքարի:

Անոր ալ կը պատասխանեն.

Մասնաւոր ուսո՞ւմ ըրած էք գոյներու վրայ:

Յիսուն հազար ոսկի հարստութիւն ունեցողն ալ օր մը կը հաճի պնդել շաքարին  
սեւութիւնը:

Կը պատասխանեն.

Կարծեն թէ շաքարը սանկ քիչ մը ճերմակութիւն ունի:

Ամենեւին չունի, ամենեւին:

Աննշմարելի ճերմակութիւն մը:

Միսալ է, կատարեալ սեւ է:

Աչքերս խաբած են գիս ուրեմն, ներեցէ՛ք:

Քառասուն հազար ոսկինոցն երկար ատենաբանութեամբ մը կը ճառէ շաքարին  
սեւութեանը վրայ:

Կը պատասխանեն.

Ձեզի համակարծիք չեմ այս մասին. շաքարն աւելի ճերմակին մօտ է քան սեւին:

Կը սխալիք, չարաչար կը սխալիք:

Կարելի է:

Երեսուն հազարանոցն կը սկսի փաստաբանել շաքարին սեւութիւնը:

Կը պատասխանեն.

Հակակարծիք են ձեզի, Էֆենտի, շաքարը սեւ չէ:

Մեւ է:

Ո՛չ:

Կարծիքներն ազատ են:

Քսան հազարանոցի հետ դէմ առ դէմ կու գամ:

Շաքարը սեւ է:

Կը սխալիք, Էֆենտիս, շաքարը ճերմակ է:

Մեւ է:

Ճերմակ է:

Մեւ է:

Ճերմակ է:

Տասը հազարանոցը կը յաջորդէ քսան հազարանոցին:

Ի՞նչ կարծիք ունիք շաքարին գոյնին վրայ:

Ատ ալ հարցնելու բա՞ն է, ճերմակ է:

Ոչ, սեւ է:

Հրամանքդ գնա, ինքզինքդ կարդալ տուր քիչ մը:

Հագարանոցը կու գայ:

Սա շարարին գոյնն ի՞նչ աղուոր սեւ է:

Շարարը սե՞ւ է մի, խենթեցա՞ր, ի՞նչ եղար:

Ինչո՞ւ խենթենամ:

Գնա՛ սրկից, աղբա՛ր, գնա՛, դուն բնաւ գաղափար չունիս գոյներու վրայ, ամօթ է, ամօթ:

Ե՞ս չունիմ:

Այո՛:

Դուն տղէտ ես:

Տղէտը դուն ես, քու տեղդ ըլլամ նէ՛ կ'ամչնամ խօսելու:

Հարիւր ոսկինոցը կը ներկայանայ:

Շարարն ինչո՞ւ սեւ է:

Պատուոյս չեմ ձգեր քեզի պատասխանելու:

Դասատու մ'ես կը պնդէ ինչ որ պնդած են առաջիներն:

Կը պատասխանեմ.

Տղայ ես դուն, նախակրթարան գնա՛:

Խեղճ խմբագիր մ'ալ օր մը պատիւ կ'ունենայ նոյնը պնդելու:

Կը պատասխանեմ.

Անպիտա՛ն, ջնջո՛ց, մուրացկա՛ն, գնա՛ գրաշարութիւն ընելու:

Երկու ոսկի ունեցող երեսփոխան մ'ալ միսներուն պէս կը պնդէ:

Կը պատասխանեն.

Ո՛հ, աւանակ:

Փող մը չունեցող երեսփոխան մ'ալ կը յանդգնի նոյնը պնդել:

Կը պատասխանեն.

Ձեզի պէսներն են, որ ժողովոյս վարկը կոտրեցին: Եւ փայտ մ'առնելով ուզածիս պէս կը ծեծեն:

Դուք ալ այսպէս չէ՞ք վարուիր, տեսարք իմ երեսփոխանք:

Ինչո՞ւ, տեսարք իմ երեսփոխանք ոմանք, ոսկի կը պահանջէք հոն ուր դատողութիւն պէտք է: Ինչո՞ւ չէք հանդուրժեր, որ դասատուներն եւ խմբագիրներն ձեզմէ աղէկ խորհին եւ խօսին: Ի՞նչ կ'ըլլայ, եթէ ձեզմէ քիչ մ'աւելի խելացի ըլլան, ձեզմէ շատ աւելի ուսումնասիրած ըլլան ազգային կեանքը: Ինչո՞ւ չէք պատասխաներ անոնց այն եղանակաւ, որով կը խօսիք մեծատուն երեսփոխանաց հետ:

Որպէսզի կարծեսց ազատութիւնն յարգուի՝ տասն ոսկիէն աւելի ստակ ունեցող ազգայիններն երեսփոխանութենէ զրկելու դրութի՞ւնն ընդունինք, թէ բոլոր երեսփոխաններն ազգային ժողովոյ մէջ դիմակով մտնելու կանոնն հաստատենք, եթէ հաստատուած չէ արդէն...

Աշխատեցէք, այսուհետեւ գործն քննել եւ ո՛չ գործատրն: Պատշաճից օրինաց համաձայն խօսեցէ՛ք իրարու հետ եւ ոմայն վէճերով ժամավաճառ մի՛ լինիք:

Այս է Խիկարին փափաքը:

### Յ ԱՌԱՋԱԲԱՆՆԵՐ ...

Երկու երեք շաբաթէ յետէ յառաջաբաններու ընթերցմամբ կը զբաղին:

Ամենդ եւ միանգամայն գուարճալի գբօսանք մ'է յառաջաբանաց վերծանումն:

Հոն կը տեսնես, որ յառաջաբան գրողներն ընդհանրապէս այնպէս կը վարուին իրենց յառաջաբաններու մէջ, որպէս կը վարուին ընդհանրապէս մարդիկ, երբ իրենց լուսանկար պատկերն հանելու համար դազերոտիպին դիմացը կ'անցնին: Գեղեցիկ երեսալու համար ամենէն տգեղ դիրքերը կ'առնուն. բնական կենդանագրութիւն նպատակաւ անբնական ձեւերու կը դիմեն. լուրջ երեսալու համար աւագակապետ կը նկարուին. իրենց պատկերն համակրելի ցոյց տալու համար մութացկաններ կը պատկերուին. Հոմերոսի պատկերն իրացնելու դիտաւորութեամբ Չոյիլի դէմքը կը գողնան:

Կե՛ղծ յառաջաբաններ... այս բոլոր յառաջաբաններու նպատակն միեւնոյնն է. ազգին ծառայել:

Ազգային մանկտոյն դաստիարակութեանը համար գոհուիլ:

Ժողովրդեան օգտակար ըլլալ, եւ իրենց վարձքն ստացած ըլլալ՝ եթէ ազգային դասատուք ներողամիտ աչօք նային գործին թերութեանց, կամ եթէ ազնիւ հասարակութիւնն սիրալիք ընդունելութիւն ընէ գրքին:

Շահու խնդիր բնաւ չկայ գործին մէջ... սեպէ թէ այս գիրքերը ձրի կը բաշխուին ազգային մանկտոյն կամ ազգային մեծ մանկտոյն:

Ի բաց մեզմէ կարծել, թէ այդ աշխատասիրութիւններն օգտակար ծառայութիւններ չեն մատուցաներ ազգին. հեռի մեզմէ խորհիլ, թէ ազգի մը կրթութեանը, նիւթական եւ բարոյական զարգացմանը նուիրուած անձինք առանց վարձատրութեան աշխատին. այսուամենայնիւ չենք ալ հանդուրժեր, որ հեղինակներն նուիրատուին կամ մեկենասին իրաւունքն յափշտակեն իրենց յառաջաբանին մէջ:

Կը փափաքիմ ես, որ յառաջաբաններն ալ անկեղծ ըլլան, այսինքն հեղինակներն, ինչպէս նաեւ խմբագիրներն, քաջութիւն ունենան խոստովանելու, թէ իրենց աշխատասիրութիւններովն ազգին ծառայելով հանդերձ անոնցմէ նիւթական շահ մ'ալ կ'ակնկալեն, կամ անկեղծութիւնն աւելի առաջ տանելով

խոստովանիլ, թէ իրենց ապրուստը հոգալու համար է միայն որ ազգին  
ծառայելու դատապարտուած են:

Ո՛հ... ի՛նչ աղէկ բան է ճշմարտախօսութիւնն... կարծես թէ մարդու սրտին  
վրայէն բեռ մը կը բառնայ եւ շնչառութիւնը կը դիւրացնէ... մարդիկ պարտաւոր  
են ճշմարտախօս լինել գէթ առողջապահական տեսակէտով:

Խստապահանջ չեն եւ. կը բաղձամ գիրք մը տեսնել հրատարակուած եւ  
հացագործի մը ձօնուած սա պէս.

Ձօն

Առ հացագործն իմ

Քիրիլէ Աբոսթոլ

Պարտք

Երախտագիտական

Եւ

ՔԻՉ Մ՛ԱԼ ՊԱՐՏՔ

ՆԻԻԹԱԿԱՆ

Հինգ հարիւր դահեկանի

Գին

Չորս հարիւր նկանակ հացի

Չորս

Չաւակներովս կերած եմ

Եւ

Յարդ վճարած չեմ

Յ իշատակ անմոռաց

Հեղինակն

Սոյն օրինակ ձօնէ մը յետոյ կ'ուզեմ յառաջաբան մը հետեւեալ կերպով.

«Ազգերնուս մէջ աղքատութեան օր ըստ օրէ զարգացման պատճառաւ՝ ես ալ  
աղքատացած լինելով եւ մանաւանդ դրամագլուխ մ'ալ չունենալով, ընտանիքս

ապրեցնելու միջոց մը գտնելու համար բարեկամաց ոմանց խորհուրդ հարցուցի. անոնք ալ ինձի ըսին, թէ ինչո՞ւ կեցեր ես, քան մը թարգմանէ՛, հարուստէ մը քանի մը ոսկի ուզէ՛, թարգմանութիւնդ տպէ՛ եւ դէմդ ելնողին մէջ-մէկ օրինակ քշէ՛: Այս խորհուրդն ես ալ բանաւոր գտայ եւ գործոյս ձեռնարկեցի: Ուստի կը խնդրեմ, որ անոր սխալներն շտեմնելու զարնելով, մէջ-մէկ օրինակ առնէք անկեց, որ հացագործիս պարտքը վճարեմ ու կարենամ գոնէ քանի մը շաբաթ խելքս գլուխս ապրիլ: Արդ, քաղցր է ինձ յուսալ, թէ պիտի քաջալերէք գործս նոյնիսկ եթէ ազգային մանկտոյն դաստիարակութեանը վնասէ»:

Այս իմաստով գրուած ձօն մ՛ եւ յառաջաբան մ՛որ անկեղծութիւնն ընկողմանեալ է, աւելի համակրութիւն կը գտնեն, քան այն կեղծ ձօներն, որք հարուստներուն ուղղուած են եւ այն յառաջաբաններն, որք անբնակելի են անկեղծութեան:

Բայց ո՞վ պիտի համարձակի մեր սոյն փափաքն յագեցնել: Ոչ որ: Գուցէ շատերն պիտի ծիծաղին իսկ եւ մեր փափաքն տարօրինակ պիտի դատեն:

Թո՛ղ ծիծաղին, մեր հոգը չէ, մանաւանդ որ անոնց յառաջաբաններուն մէջ ես իմ փափաքիս յագուրդ կու տամ թէպէտեւ ոչ-պաշտօնական կերպով...

Պաշտօնական ճշմարտութիւնն ո՞վ տեսած ունի արդէն: